

ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյալիս խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ».

Կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են

խրաւարանիւր տողատեղին 10 կոպեկ.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԸ

ԲԱՅՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԿՈՒԹՅՈՒՆ

(30-Դ ՏԱՐԻ)

ՆԵՐԿԱՅ 1902 ԹԱԿԱՆԻՆ

«ՄՇԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՆՈՅՆ ՊՐՕԳՐԱՄՈՎ ԵՒ ՆՈՅՆ ՈՒՂՈՒԹԵԱՄԲ

ամեն օր, բացի տօներէն յաջորդող օրերէն:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒՆԸ. «Մշակ» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն եւ մէկ եւ տասն
ամսականը՝ 9 ռ., ինն եւ ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ
ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ. եւ մի
ամսականը՝ 1 ռուբլի:

ԱՐՏԱՄԱՀՄԱՆՆԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է
վճարեն տարեկան 7 զոլլար. եւ օրական բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի
բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՐԱՏԱՐԱՆԸ (Բաղադրանքաւ եւ Բարձրակարգ փողոցների
անկիւն), իսկ ԲԱԳՐՈՒՄՆ. Դաւթեանի մօտ:

Կայտարարութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿ» գրվելու համար եւ առհասարակ նամակ-
ներ եւ ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետեւեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция
«МШАКЪ», իսկ արտասահմանից՝ ТИФЛИС, Rédaction du journal arménien «MSCHAK».

Յայտարարութիւնները ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԶԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ներկայ գրութիւնը. ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Մամուլ. Ինչ է նոր տարին. Նամակ Բա-
գուր. Նամակ Խմբագրութեան. Ներքին լու-
րեր. ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լու-
րեր. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
ՆԵՐ. — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երուսաղէմում:

ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Մեր մօտեք նոր տարին տնտեսական
ծանր պայմանների մէջ: Մեր երկրի ա-
մենախոշոր արդիւնաբերութիւններից մէկը,

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵՐՈՒՍԱԳԵՄՈՒՄ

(Թուղթի տպագրութիւններ)

Մօտ երկու ամիս արանից առաջ, Երուսա-
ղէմում, Փրկչի գերեզմանի տաճարի մէջ, մի
արիւնահոգ կուռ տեղի ունեցաւ լատին եւ յոյն
հոգեւորականների մէջ:

Լատինները կամեցան աւելի տաճարի ան-
դունները, յոյները հակառակեցին՝ առարկելով,
որ անդունները աւելիլու իրաւունքն իրանցն
է. լատինները պնդեցին. — մենք էլ այստեղ ի-
րաւունք ունենք, մենք էլ Փրկչի գերեզմանի
պահպաններ ենք: Խօսք խօսքի վրայ եւ ան
կրօնաւորները վազեցին իրանց լուրացրի, վեր
տառն արդէն պատրաստ մահակները (ամեն մի
կրօնաւոր Երուսաղէմում՝ լատին, յոյն, հայ,
ասորի, ղպտի, հարէչ, պահեստում ունի մի մա-
հակ կամ լատին) եւ դուրս վազեցին:

Եւ Քրիստոսի խոնարհ ու հեզ աշակերտները
վայրկենապէս կերպարանափոխվեցին ու դար-
ձան իսկական զինւորներ, պայքար կատարած,
զայրացած, գազանացած մարդիկ, որ հարբել
են արեան հոտով ու այլ եւս ոչինչ չեն տես-
նում, աչքերը արիւնով լցվել են: «Մենք
պէտք է աւելնք սանդուխները», գոռացին լա-
տինները. — Ոչ, մենք պէտք է աւելնք, հեռա-
ցէք: Եւ մահակի հարուածները տեղացի մի-
մեկի գլխին, մէջքին, ջարդվեց լինթ ու պը-
ռուռ, արիւնը սկսեց հոսել անտեղ, ուր Մեծ
վարդապետը իրան զոհեց մարդկութեան արդ
եւ փրկութեան համար: Վերջապէս վրա հա-
սան թիւք զինւորները, ժանդարմները եւ հա-
զի կարողացան բաժանել կռուող կրօնաւորնե-
րին, որոնք հեռացան միմեանցից հայտնիով ու
սպառնալով. — Որպէս զի էլ չը կուէք, ասա-
ցին թիւքերը, սանդուխները մենք կաւելնք:

նաւթագործութիւնը, գտնվում է Դնիպր, ընկնում գրութեան մէջ: Թիֆլիսի, Բա-
գուր, Բաթումի եւ ուրիշ քաղաքների թէ-
առեւտրականները եւ թէ արհեստաւորնե-
րը սահմանափակել են իրանց գործու-
նէութիւնը զգալի չափով: Դիւղակի արդ-
ունաբերութիւնը թէ եւ ազատ է համա-
տարած մեծ աղէտներից, բայց մեծ մա-
սամը կարօտութեան մէջ է, որովհետեւ
հին աղէտները թողել են այնպիսի խոր
վերքեր, որ պահանջում են մի քանի տա-
րի ժամանակ դարմանվելու եւ անհետա-
նալու համար:

Կը մարքենք մինչեւ դատաստանը եւ մինչեւ որ
փաշան կը վճէ գործը:

Եւ թէ լատինները, թէ յոյները ուրախու-
թեամբ ընդունեցին այդ կարգադրութիւնը. թող
թիւքը, անհաւատը աւելի, միայն ոչ յոյնը, ա-
սում է լատինը. թող տաճիկը, մուսուլմանը
աւելի, միայն ոչ լատինը կամ հայը, ասում է
յոյնը:

Վերջապէս, ինչպէս հեռագիրները յայտնեցին,
թիւքերը կառավարութիւնը, թէ կռուող կող-
մերը գոհացրելու եւ թէ իրան էլ չը մոռանա-
լու սկզբունքի վրա հիմնված, հետեւեալ վճիռը
կայացրեց. սանդուխները կը պահպանեն թիւք-
քաջ զինւորները, առաւօտեան սանդուխները
կաւելն յոյները, իսկ երեկոյեան՝ լատինները:
Ճիշդ ընկուղի վէճի մասին եղած դատաստանը,
գովիւղով ինձ, իսկ կենցաղ միւր քեզ, միւր
քեզ, էլ մի կուուէք, ասաց արդարադատ դա-
տաստը կուող մանուկներին:

Ճիշդ 1900 տարի է, որ քրիստոնէութեան
զաղափարը, այն է մարդասիրութեան, եղբայ-
րասիրութեան, համեղաշխութեան, ներդա-
մտութեան եւ անձնութեան զաղափարը, քա-
նաճում է մարդկութեան եւ, սակայն, մենք
տեսնում ենք, որ նրանք, որոնք այդ զաղա-
փարի տարածողներ են ներկայացնում իրանց,
Քրիստոսի աշակերտ եւ հետեւող են քարոզում
իրանց. արիւնահոգ կուռներ են սարքում Քրիս-
տոսի գերեզմանի, ծննդավայրի առաջ: Եւ
այդ կուռները քրօնքական են դարձել. նը-
րանք վտանգ են սպառնում նոյն իսկ համաշ-
խարհային խաղաղութեան. իրիւթի պատերազմի
սկզբնապատճառը, երբ Եւրոպան ծրարաբար
առաջնորդութեամբ՝ զինաւորվեց Ռուսաստանի
դէմ, Երուսաղէմի այդ կուռներն էին, կամ, ինչ-
պէս սովորաբար ասում են, «Սուրբ Վայրերի
հարցը»:

Քրիստոնէական անուն համար այդ գալ-
թակական կուռների մէջ անմասն չեն մնում
եւ հայերը:

Բայց ինչքն են ծագում այդ կուռները, քրիս-

իսկ արդեօք մենք կարող ենք յոյս ու-
նենալ, որ կուռներն մի քանի բարեխա-
ջող տարիներ միմեանց յաջորդող: Ներկայ
ձեռք շատ օտարաւոր է իր ընթացքով:
Չը նայելով, որ յունական մէջն ենք, դեռ
մենք ձիւնի երես չենք տեսել: Ամբողջ
դաւառներ երկուց են կրում, որ նրանք
կը մնան առանց ձիւնի եւ կարող են կորց-
նել իրանց հունքը: Միայն վերջին 5—10
օրում մի քանի տեղերում ձիւն է նստել
բաւարար քանակութեամբ: Չմեղվայ տա-
քի եւ ձիւնի բացակայութեան պատճառով
անաւի բազմացել են դաշտային մկները,
որոնք ամեն տեղ երեւացել էին մեծ քա-
նակութեամբ՝ սխառ Պերեբրիցի մինչեւ
Սուրամի կողմերը:

Արդիւնաբերական աշխարհում երեւացած
տնտեսական ազդեցութիւնը միայն մի ու-
սանելի կողմ, այդ այն է, որ նա պէտք է
զգուշացնէ մարդկանց սպեկուլացիայից,
որ շատ նպաստել է ներկայ տագնապի
խտուութեան: Արդիւնաբերական գծադ-
րութիւններ միշտ պատահել են եւ դար-
ձեալ կը պատահեն: Բայց նրանք շատ
սուր եւ քայքայող բնաւորութիւն են ստա-
նում, երբ զոհ են դառնում սպեկուլեա-
ցիայի, առեւտրական մեքենայաբերութեան
եւ խաղաղութեան: Այդպիսի դէպքե-
րում անսկզբութիւնները այնպիսի կերպա-
րանք են ստանում, որ այլ եւս հեշտ է
նրանց մեղմացնել եւ վերացնել: Մնակու-
թիւնները քանգում են, աւելում մի շարք
ձեռնարկութիւններ, տեղի տալով այն
գործառնականութիւններին, որոնք ոյժ ունեն
անսկզբ հարուածները եւ նոր տնտեսա-
կան պայմաններին ընտելանալու:

Դժբաղդաբար, չը նայելով այն մեծ
պատիժներին, որ ստացել են մեր արդիւ-
նաբերողները ներկայ ձգնաժամից, մենք
չենք նկատում սթափման հաստատ եւ
որոշ նշաններ: Կարծես ամենքը սպասում

տնտէութեան համար այդ գալթակական ցա-
ւաղի դէպքերը. ինչու յոյն, լատին, հայ հոգե-
ւորականները չեն կարողանում հաշտ եւ եղ-
բայրաբար ապրել:

Մենք կամենում ենք փոքր ի շատէ լուսա-
բանել այդ հարցերը եւ մի ամփոփ գաղափար
տալ «Մշակին» ընթերցողներին Երուսաղէմի մա-
սին, հրատարակելով մեր ճանապարհորդական
տպագրութիւնները: Ճիշդ է, այդ ճանապար-
հորդութիւնը մենք կատարել ենք 1893 թվին,
բայց նրանք կատարված արիւնահոգ դէպքերը
ցոյց են տալիս, որ երկրի վիճակը մնում է
նոյնը, հետեւաբար, այդ տպագրութիւնները
չեն կորցնում իրանց թարմութիւնը:

Բայց առաջ, ընթերցողների դիւրութեան հա-
մար, կարեւոր ենք հատարում մի քանի տեղե-
կութիւններ հարցողի Երուսաղէմի սուրբ վայ-
րերի մասին:

Պատմութիւնից յայտնի է, որ ս. վայրերը
պայքան Քրիստոսի գերեզմանը, Գողգոթան,
Ծննդեան մասերը, Աստուածածնի գերեզմանը
եւ առ հասարակ տնօրինական կոչված տեղերը
անմասնօք էին քրիստոնէականներին մինչեւ 326
թիւր, երբ Կոստանդիանոս կայսրի կինը, Հե-
ղինէն, գալով Պաղեստին, հետամուտ եղաւ եւ
գտաւ խաչափայտը, որից յետոյ հոյակապ
տաճարներ եւ եկեղեցիներ կառուցվեցին
թէ Երուսաղէմում եւ թէ նրա շրջակայ
քաղաքները: Եւ ինչպէս ինչպէս մասնակից եղաւ
եւ Տրդատ հայոց թագաւորը ու հայոց իշխան-
ները, եթէ հաւատանք իննորդ դարի պատմիչ
Մովսէս Կաղանկատեւացուն եւ անյայտ մնացած
Անատոս վարդապետ անունով մի պատմաբանի
Այդ տաճարների մէջ նշանաւորներն են Յարութեան
տաճարը, Փրկչի գերեզմանի վրա, Բեթ-
ղէնէմի տաճարը՝ Մուրի վրա, տաճարներ՝ Աս-
տուածածնի գերեզմանի, Գողգոթայի, խաչի
դիւտի վրա, Զիթնեաց սարի վրա, Համբարձ-
ման տեղը եւ այլն: Ապագայում հեղհեղեմ
կառուցվեցին այլ քաղաքի եկեղեցիներ, վան-
քեր, մատուռներ բոլոր այն տեղերում, որոնք
կապված են որ եւ է իշխողութեամբ Քրիստոսի
եւ նրա առաքեալների ու աշակերտների հետ:
Սակայն մեզ հարկաւոր է այս իմանալ, որ
սկզբում բոլոր տնօրինական տեղերը եղել են
յունաց եւ հայոց սեփականութիւն. ապագա-
յում, մասնաւոր խաչակրաց արշաւանքից յե-
տոյ, հանդէս են եկել եւ կաթօլիկները, ապա
եւ վրացիները եւ հայկելով ու աւելի ուժեղ է
եղել, նա տիրացել է տնօրինական տեղերին:
Այդպէս չարունակ, մասնաւոր թիւքերի տի-
րապետութիւնից յետոյ, կուռներ են տեղի ու-
նեցել յոյների, լատինների եւ հայերի մէջ տե-
րունական տեղերի տիրապետութեան համար
(վրացիները չեն կարողացել որ եւ է բան պա-
հել իրանց ձեռքում), բայց դարեւրով երեք աղ-
գութիւն, կամ քրիստոնէական եկեղեցու երեք
գլխաւոր գաւառութիւններ, համարվել են ս.
տեղերի սեփականատէր. յոյները, լատինները
եւ հայերը. ուրիշ ազգերը, այդ երեք դաւա-
նութիւններին պատկանող, համարվել են ե-
րաւակներ, հետեւաբար նրանց, օրինակ առա-
նները, վրացիները, պաղները համարվում են
հետեւորդ յոյների. բոլոր կաթօլիկ ազգերը՝
լատինների, իսկ հայերի հետեւորդներն են՝ ա-
սորիները, ղպտիները եւ հարէչները:

են, որ մի կերպ անցնի ներկայ ծանրու-
թիւնը եւ նրանք նորից կրկնեն այն, ինչ
որ բերեց նրանց այժմեան ծանր դրու-
թեան:

Ոչ որ չէ ուղում յոյս դնել լուրջ աշխա-
տանքի եւ խելացի գործաւարութեան վրա,
այլ սպասում են բազմի աջող բերմուն-
քին, ուրիշ խօսքով, կոյր պատեհականու-
թեան: Ժամանակն է սթափվել:

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հայ դերասանական խմբի այս սեզօնի գոր-
ծունէութիւնը առիթ է տալիս Կ. Պօլսի «Մա-
սիս» շաբաթաթերթին մի քանի իրաւացի խոր-
հրդածութիւններ անել: Բերելով այն փաստը,
որ սեզօնի սկզբից դերասանական խումբը
մնացել էր անձաւ, իսկ հայ թատրոնի գոյու-
թիւնը միանգամայն անորոշ գրութեան մէջ
էր, շաբաթաթերթը շատ իրաւացի կերպով
նկատում է, որ խմբի ջանքերը Թիֆլիսում ա-
ջողութեամբ պատկվեցին. նրանց չնորհիւ թատ-
րոնը համակրութիւն գտաւ հասարակութեան
մէջ: Ինչ է ցոյց տալիս այս օրինակը. — Այն,
որ տոկուն ջանասիրութեամբ կարող է նոյն
իսկ հրաշքեր գործել, մի ճշմարտութիւն, որ
«Մշակին» էլ չեղտել է մի քանի անգամ: Ան-
շուշտ դերասանական խմբի աջողութիւնը մեծ
մասամբ տիկին Մերանոյի ջանքերին է պար-
տական: Շաբաթաթերթը ասում է.

Բնական հակումը, ներշնչումը, ծաշակը
իրաւ է, որ իրենց մեծ բաժինը ունին դե-
զարուեստի գործերու մէջ, բայց աշխատող
ու յարատեւող ըլլալու ճիշդը նոյնքան մեծ
գրաւական միջ է յաջողութեան եւ անհրա-
ժեշտ պայման: Բնական կեանքը դերձ չէ
այս պայմանին: Նիւթական անկուններու եւ
բարձրացումներու մէջտեղ, յաջող կամ ան-
յաջող չըմաններու միջոցին, դերասանը ու
դերասանուհին, որոնք դասավիճել չեն ըլլար,
ու պղտիկ չանձ մը գոհացած ատենին այն-

քեր, մատուռներ բոլոր այն տեղերում, որոնք
կապված են որ եւ է իշխողութեամբ Քրիստոսի
եւ նրա առաքեալների ու աշակերտների հետ:
Սակայն մեզ հարկաւոր է այս իմանալ, որ
սկզբում բոլոր տնօրինական տեղերը եղել են
յունաց եւ հայոց սեփականութիւն. ապագա-
յում, մասնաւոր խաչակրաց արշաւանքից յե-
տոյ, հանդէս են եկել եւ կաթօլիկները, ապա
եւ վրացիները եւ հայկելով ու աւելի ուժեղ է
եղել, նա տիրացել է տնօրինական տեղերին:
Այդպէս չարունակ, մասնաւոր թիւքերի տի-
րապետութիւնից յետոյ, կուռներ են տեղի ու-
նեցել յոյների, լատինների եւ հայերի մէջ տե-
րունական տեղերի տիրապետութեան համար
(վրացիները չեն կարողացել որ եւ է բան պա-
հել իրանց ձեռքում), բայց դարեւրով երեք աղ-
գութիւն, կամ քրիստոնէական եկեղեցու երեք
գլխաւոր գաւառութիւններ, համարվել են ս.
տեղերի սեփականատէր. յոյները, լատինները
եւ հայերը. ուրիշ ազգերը, այդ երեք դաւա-
նութիւններին պատկանող, համարվել են ե-
րաւակներ, հետեւաբար նրանց, օրինակ առա-
նները, վրացիները, պաղները համարվում են
հետեւորդ յոյների. բոլոր կաթօլիկ ազգերը՝
լատինների, իսկ հայերի հետեւորդներն են՝ ա-
սորիները, ղպտիները եւ հարէչները:

Այդ պատճառով Երուսաղէմում կան երեք
գլխաւոր պատարարութիւններ. յունաց, լա-
տինացի եւ հայոց պատարարները: Սուրբ
տեղերի վրա կառուցված տաճարներում պատա-
րաղ եւ ժամասացութիւն կատարելու իրաւուն-
քը պատկանում է միայն այդ երեք ազգերին.
եթէ, օրինակ, առանց կամենան պատարաղ
մատուցանել եւ գերեզմանի վրա, յոյները պէտք
է նրանց իրաւունք տան, կաթօլիկներին՝ լա-
տինները, իսկ ասորի, ղպտի, հարէչ պէտք
է իրաւունք ստանան հայերից: Ահա այդ փո-
խադարձ իրաւունքների եւ նրանց պաշտպա-
նութեան շուրջը ետում է շարունակ կուռ-
ձգտումն ընկերից մի քան յափշտակելու, իւ-
րացնելու:

Հ. Ա.

պէս եռանդուն կը հանդիսանան բնութիւնը, ինչպէս էին փայլուն օրերուն, յաջորդութիւնը կը գտնեն ուշ կամ կանուխ Տիկին Սիրանոյշը, որքան որ կրցանք գաղափար կազմել հետեւին հասած արձագանքներէ, նեղ դրութեան մը մէջ գտաւ ինքզինքը այս տարի, Կովկաս վերադարձին Բագուն իր սր-նանկութիւններովը, իր նաւթային բաժնե-թուղթերուն անկումովը զբաղած էր։ Թիֆ-լիզ՝ քանի տարիէ ի վեր թատրոնական կա-նոնաւոր վարչութիւնէ՝ զուրկ՝ անցորդ խում-բերով ու պատահական ներկայացումներով կը գոհանար։ Փոթորիկ մըն էր այս, որուն առջեւ պէտք էր չուարիչ։ Ու տիկին Սիրա-նոյշ, գոտեւորներով իր չուրջը հաւաքեց տրամադրելի բեմական ոյժերը, որոնց հետ խումբ կազմեցին, խաղաղուցակ պատրաս-տեցին, թատրոն վարձեցին եւ սկսան ներ-կայացումներու Բուն արուեստագէտի կեան-քըն էր այս՝ վաղուանին վրա անվտանգ, քի-չով գոհանալու յօժար, նիւթական պէտքերէ չըրջապտոված ու միջակիցներու կուրծք տա-լու պարտաւոր։ Արեւելեան հայերուն ճա-շակը շատ խիստ է, ինչպէս գիտենք, թա-րոնի մասին, եւ խնամով, գիտակցութեամբ եւ երկարաշունչ նախապատրաստութեամբ բեմ հանուած խաղերը հաջիւ հանելի կըլլան անոնց։ Տիկին Սիրանոյշ, իր ընկերներուն եւ ընկերակիցներուն հետ, գիտցաւ գոհացնել այդ ճաշակը ու կարճ միջոցի մէջ համակրա-կան ծափեր խլեց Թիֆլիսի հասարակութիւնէն։

Այս բոլորը ճիշդ է։ Մենք էլ հաւատում ենք յարանուող եռանդի ոյժին, հաւատում ենք, որ ոչ ի՞նչ յուսահատութիւն, ոչ պատրաստ է աշխատել, նրան է վերապահված յաղթու-թիւնը։ Սակայն հաւատալով էլ դիմենք մեզ հետաքրքրող յօդուածի վերջին։

Նիւթական յաղորդութիւնն ալ անշուշտ զուգընթաց էր արուեստագիտականին, այն-պէս որ՝ հոկտեմբերի սկիզբը առանց բեմի, առանց թատրոնական կազմակերպութեան, ինքզինքը վնասողոցից պայմաններու մէջ գտնվող զերբանական խումբը՝ նոյեմբերի վերջը գոհունակ տպագրութեան մը տակ էր, որ հրաժարել տուաւ։ Արտիստիքական թատրոնին եւ տիկին Սիրանոյշի առաջնոր-դութեամբ ուղղուեցաւ դէպի նաւթային քաղաքը, ուր նրան համակիր ընդունելութիւ-նը կը սպասէ իրեն անշուշտ։

Ահա այստեղ է, որ սխալվում է Կ. Պոլսի չարաթաթիւնը, ինչպէս եւ մենք էինք սխալ-վում։ Բանից դուրս է գալիս, որ բնական հան-գամանքներից բնական հետեւանք կարելի է սպասել ոչ թէ մեղմանում, ոչ թէ հայերի պէս մի ժողովրդի մէջ։ Բագուի դրամական ճգնա-թամբ բարոյական այնպիսի անանկութիւն մեր-կացրեց, որ մեր դերասանների գործը այնտեղ շատ վատ է գնում։ Իրանց փողային բարեկե-ցութեան վրա ողբացող բազուցները, այն բազուցները, որոնք իրանց բանուորների եւ ծառաների ոտնիկները պակասեցնելու միջոցով են ուղղում կրեանական դրութիւնը պահպա-նել, ինչ սիրտ կարող են ունենալ դէպի մի այնպիսի վերացական գործ, որպիսին է հայ թատրոնը։ Այն, թող իմանայ (Մասիա) չարա-թաթիւնը, որ յարասեւ ջանքերով, տոկուն աշխատանքներով թափաքել կըզու թիֆլիսի հայութեան անտարբերութիւնը աստամբ յաղ-թանարել։ Բայց Բագուի բարոյական անանկու-թիւնը կտորելու համար շատ ու շատ քիչ է այդ բոլորը։ Եւ թատրոնը այնտեղ տոնից մո-ռացված է։ Ուրիշ բան կը լինէր, ի հարկէ, եթէ հայ դերասանները կարողանային այնպէս անել, որ նաւթի գինը դարձնալ հասնէր 17 կոպէկի։ Այն ժամանակ գուցէ եւ լինէին աւե-լորդ բուրջներ՝ հայ թատրոնին տալու համար։ Իսկ այժմ Իզուր չէ կազմվել հայ վախառու-ների դաւանութիւնը։ Փող է, հողի չէ, որ հեշտութեամբ տամ»...

ԻՆՁ Ե ՆՈՐ ՏԱՐԻՆ

Անյիշելի ժամանակներից սկսած մինչեւ մեր օրերը, երկար դարերի ընթացքում, մարդկու-թիւնը ինչ որ մի սրբազան եւ խորհրդաւոր անանկութեամբ բուն չնորհաւորութիւններ է ուղղում իր մօտիկ եւ հեռուար սիրելիներին։ «Շնորհաւոր նոր-տարի» — լսվում են այս օրերս աշխարհի ամեն ծայրերից եւ արտաքին բարե-մաղթութիւններ են, որ փոխանակում են մէկ մէկի։

Ինձ թուում է, որ հին-հին ժամանակներից մնացած այդ աւանդ մի հառաչանք, մի յոյս, մի տենչանք է աղատութեան եւ հացի համար տանջվող ու զոհվող մարդկութեան։ Տենչանք, որ մինչեւ հիմա էլ մնացել է անկատար...

Դուք հօ տեսել էք, թէ ինչպէս մեր այս քաղաքած դարում ախնազօր ամանանք, ձեռք ձեռքի տուած խաւարի եւ բռնութեան հետ, կատաղի պայքարի մէջ է մտել ամեն տեղ երկ-րիս վրա — խեղճութեան, աշխատանքի եւ իրա-ւունքի հետ։ Հրապարակ է եկել իր ամբողջ

վայրենի թափով բնութեան սոսկալի օրէնքը — մեծի, ուժեղի օրէնքը, որ ուղղում է կուշ տալ աշխարհը, լծի տակ պահել բոլոր խեղճներին ու թողելին...

Այդ պայքարը նոր չէ սկսվել. նա իր սկիզբն առնում է շատ հին դարերից։ Մի ժամանակ՝ առաջին հալածների եւ վիշապների, մի ուրիշ ժամանակ՝ խորամանկ քոթերի ու հաւատալից նիշերի, այսօր էլ կապիտալի, խաւարի ու ալ-անարդար տարբերի ձեւով — նոյն անողբ բռն-նութիւնն է, որ իր անարգար լուծն է հաստա-տում մարդկանց աշխատանքի եւ հոգու։ Վրա Առաջ էլ, հիմա էլ նոյն բռնութիւնն է, ամառ-վողն էլ նա է — իրաւունքը, տանջանքն էլի նոյնն է — խեղճի կեանքը։

Տանջանքը տանջանք է, բայց կենդանի մար-դու համար կեանքն էլ քաղցր է. զատաժնալ ծերն անգամ հեշտ չէ բաժանվում նրանից։ Նա մի մեծ հազուագիւտ բարիք է, մի անմահ հրա-շալիք, որին ամենքն էլ սիրում են։ Դա էլ մի օրէնք է բնութիւնից զրկւած, գոյութեան օ-րէնք։ Եւ ինչքան լաւ է, որ այդպէս է։ Եթէ այդ կեանքի տեսելը չը լինէր, ինչ պիտի անէր տանջվողը, ինչպէս պիտի գիտնար նա անհա-ւասար կուլին։ Կեանքի, երջանիկ կեանքի այդ կարօնն է, որ ամեն տարեմտին յոյս ու երազ դարձած, դուր է թելուած նրա տանջված հոգու խորքերից։ «Աստուած, Դու այս նոր-տարին շնորհաւոր ու բախտաւոր անցնես մեզ համար»...

Այդ հառաչանք-աղերսը, այդ տանջանքի եր-գի ձայները ինձ էլ են գալիս, գտնուած եմ լը-տում եմ ձեզ, աշխարհի բոլոր խեղճեր ու մո-ռացվածներ, լսում եմ եւ ձեզ, զաղափարական կուլից յոյնած, վատված, կրեանական ուժա-թափ իղած պարտաճանաչ, աշխատաւոր երի-տասարդութիւն, եւ ձեզ, հոգեւորական գործերի, որ վառվումն արտով ու ջղերով անհաւասար կուլի մէջ էք մտել տանջված, իրաւագուր կե-բօր համար — այն լսում ձեզ, լսում եւ ուխ-տում ձեզ հետ մինչեւ վերջին շունչը վրէժիւրն-դիւ լինել բռնութիւնից, ատել ու չը հաշտվել նրա հետ, եւ այս հանդիսաւոր տարեմտին ամբողջ արտից ցանկանալ ձեզ, բոլոր «բազ-րածներիդ ու բռնաւորներիդ» — շնորհաւոր նոր, աղատ եւ երջանիկ կեանք։

Յ. Մուրադեան

Ա խ ա լ ց ի ա .

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Դեկտեմբերի 30-ին

«Իզուր եկանք Թիֆլիսից» ահա ինչ ենք լսում հայ դերասաններից։ Սա մի գտն ճշմար-տութիւն է, անփոփոխ երեք բառի մէջ, մի իրաւացի յանդիմանութիւն Բագուի հայ հասա-րակութեան հասցէին, որը մինչեւ կտորել խորի է մերկանալ հաշիւների մէջ այնպէս, որ նրան այդ անդունդից հանելու համար ահա-գին ջանքեր են հարկաւոր, իսկ մեր դերասան-ները, ոչ չը գիտէ, որ այդպիսի ջանքեր գոր-ծադրել այլ եւս անկարող են։ Անմտութիւն է պահանջել նրանցից աւելին՝ քան նրանք կարող են տալ։

Յաճախ լսում ենք գանգաւանք՝ թէ դերա-սանները անբարեխղճութեամբ են վերաբերվում դէպի իրանց սրբազան գործը — եւ սակայն, երբ պահանջում էք բացատրել, թէ ինչի մէջ է կա-յանում նրանց անբարեխղճութիւնը, ձեզ պա-տասխանում են, թէ լաւ չեն խաղում, անաւանքով վատ է, թէ՛ ոյժեր չը կան, թէ՛ եղանակն էլ սովորաբար գնում են այնպիսի պիտանք, որոնք իրանց ամպլուայից դուրս են, ոյժերից վեր, եւ այլ այսպիսի ընդհանուր բնատրութիւն կրող նկատողութիւններ։ Ասում են միայն, բայց եր-բէք մտքով անգամ չեն անցկացնում մօտենալ այդ հանգիստ չը գիտող աշխատողներին, կապվել սերտ կերպով բեմի հետ եւ այսպէս ձեռք ձեռքի տուած առաջ տանել ընդհանուր հասարակական գործը։

Դատարկտեղ ամենքն իրաւունք են համա-րում, բայց ոչ ոք չէ մօտենում, ոչ ոք չէ ու-ղղում այդ ծանրութեան գէթ մի հազարերորդ մասը կրել իր ուսերի վրա։

Ուր են մեր անեղ կօմիտետի ոչ պակաս անեղ ներկայացուցիչները, որոնք իբր թէ նուիրված էին գործին մի ժամանակ եւ կարող ու կանօններ էին թելադրում դերասաններին, եւ այդ բնական էր համարվում. իսկ այժմ մինչեւ անգամ չեն էլ յաճախում թատրոն հայոց ներ-կայացումներին, բայց ուսաց խմբի ներկայա-ցումներին միշտ, գրեթէ, ներկայ են։ Այժմ, երբ նոյն այդ դերասանները փորձում են գործել ինքնուրույն կերպով, ոչ ոք չէ մօտենում նրանց, ոչ ոք չէ խրախուսում նրանց։ «Կապը» տուր ձեռքս, ապա արի՛ւժնեմ քեզ — այս է եղել նախ-

կին ղեկավարների յենակէտը այդ գործում եւ այժմ էլ նոյնն է։

Ներկայացումները իրանց ծախսը չեն ծած-կում, որովհետեւ ժողովուրդը չէ յաճախում թատրոն, ասուել են ամենքն հայ բեմից, մոռա-նցեք — նաւթի արժէքը ի՞նչ է 4 կոպէկի — եւ արժնով ամեն բան բացառված է արդէն։ «Նաւթ եւ թատրոն», «թատրոն եւ նաւթ», բնական է, երբ մէկը զրկի միւսի կողքին — այն միւսն էլ կը սեւանայ... սակայն դրանով մենք միայն մի բան ենք ապացուցանում հազարերորդ անգամ, թէ սեւ աւագ ուղ իսկապէս մենք ենք, որովհետեւ մեր մէջ դէպի այդ կրթական հիմ-նարկութիւնը սպիտակի նշույլ անգամ չէ եղել։ սկզբից ի վեր եւ դերասանները իրաւունք ու-նեն մեր սեւ ու թիւիւնը երեսով տալ, ասելով «Իզուր եկանք Թիֆլիսից»...

Ականջ ունեցողը թող լսէ...

Սաք

ՆԱՄԱԿ ԽՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Շուրջալի, յունվարի 3-ին

Ստացայ տեղիս քաղցածներին բաժանելու համար պ. Դասպար Տէր-Մարգարեանից 50 բուրջի, պ. Եփրեմ Ծատուրեանից 50 բուրջի, պ. Ռոստոմ Մարտիրոսեանից 100 բ., երկու պարոններից Գ. Գ. 10 բուրջի, ընդամենը 210 բուրջի։

Այդ գումարով այսօր, ներկայութեամբ գիւ-ղական դատաւորների ու վեց պատուաւոր պա-րոնների, բաժանեցի 93 տան 185 պոչ՝ 34 ֆունտ 1 բ. 13 կօպէկանոց ալիւր, որը եւ կանէ 210 բուրջի։ Ուղարկում եմ խնդրաւոր-թեանը արձանագրութեան իսկականը։ Այս մա-սին բարոյական պարտք եմ համարում «Մշակի» միջոցով իմ խորին շնորհակալութիւնս՝ յայտ-նելու վերջինից յարգելի պարոններին, որոնք բարի գտնվելիս փոքր ի շատ թեթեւաբեկու տեղիս կարօտեաների դրութիւնը։

Տանուտէր՝ Վ. Մեհրաբեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կիրակի, յունվարի 6-ին, ժողովրդի խումն բազմութեան եւ գործի ներկայութեամբ, կա-տարվեց Ջորջիների սոյորական եկեղեցական թափորը ուսուցչ Ալեքսանդր-Նելսոնի եւ հա-յող Վանքի մայր-եկեղեցիներից դէպի Մագա-թեան կղզին, Կուր դետի ափը, ուր պատ-րաստված էին առանձին տեղեր խաչը ջուրը գցելու համար։

Թիֆլիսի քաղաքային դռման իր վերջի նիս-տում, որ տեղի ունեցաւ երկուշաբթի, յուն-վարի 7-ին, որպէս խնդրել էլ խանութիւնից, որ թող արլի դռմայի նիստերը օրինաւոր համա-րել, երբ ներկայ է ձայնաւորների երրորդ մասը ոչ թէ նրանց այն ընդհանուր թուից, որ գոյու-թիւն ունէր դռմայի ներկայ կազմի սկզբում, այլ որ գոյութիւն ունէր ներկայումս, այն է փո-խանակ 80 անձի հաւել 56։ Դռմանց այդ որոշումը համաձայնեցնում է Պետերբուրգում գոյութիւն ունեցող կարգին։

Դռմայի նոյն նիստում քաղաքային ու պրա-վայի անգամ վերընտրվեց Ե. Խոսրոսեան։

Երեկ, յունվարի 8-ին, Թիֆլիսում հողին յանձնեցին Ա. Ե. տի. Խ. Ո. զ ա մ Ի ր Ե ա ն ց Ի ն Ե Հանգուցեալ իր կեանքի մեծ մասը անց է կացրել Բաթում քաղաքում, ուր նա ջերմ մա-նակցութեան ունէր հասարակական գործերում։ Նրա ջանքերով եւ գործակցութեամբ առաջ գնացին Բաթումի ուսումնարանի եւ եկեղեցու շինութիւնը եւ ուրիշ ընթացիկ հասարակայն գործեր։ Բաթումի հայոց եկեղեցու շինութեան հոգաւորաւորութիւնը զբղ էր իր կողմից պակ-հանգուցեալի դազակի վրա։ Հանգուցեալը յայտնի էր իբրեւ եռանդուն գործող։ Նա՞մեծ օգնութիւն հասցրեց թիւրքահայ գաղթական-ներին պատուաւորութեամբ գործում յայտնի աղե-տներից յետոյ Բաթումի քաղաքային դռման, «У-рпомощиъ Бѣот.» լրագրի ասելով իր ար-տակարգ նիստում յարգել հանգուցեալի յիշա-տակը ոտքի կանգնելով։ Նրա մահվան առթիւով հանգուցեալի դուստր Եւգենիա Բաթումի արել է հետեւեալ նուիրատուութիւնները։ — Բաթումի կարօտեաներին 100 բ. Բաթումի եղեղեցուն 100 բ. Վ. Աղաբեկի կարօտեաներին 100 բ. Թիֆլիսի հայոց բարեգործական ընկերութեան 100 բ. Թիֆլիսի գիշերային ապաստարանին 100 բ. Գ. Արքունիստ մահարձանի համար 75 բ. Մ. Նալբանդեանի մահարձանի համար 75 բ. Երզրումի երկրաշարժից վնասվածներին 200 բ. «Մշակի» տասն օրինակի դիւղերի համար 100 բ. երկու ջրաւոր ընտանիքի 200 բ. Թիֆլիսի Հաւ-լաբարի էժանագին գրագրական 100 բ.։

Անգրիվկասեան երկաթուղու գլխաւոր կա-ռավարիչ Ե. Լ. Վեդենեւիկի սպանութեան մա-սին մեզ հաղորդում են հետեւեալ մանրամաս-նութիւնները։ Յունվարի 4-ին, երեկոյան մօտ 10 ժամին, Վեդենեւիկ գտնվում էր իր բնակա-րանում, ինժեներ Կարապետեանի տանը, Ալեք-սանդրովսկայեա փողոցի վրա։ Նրա կինն եւ աղջիկն այդ ժամանակ թատրոնում էին. տանը մնացել էին միայն նրա փոքրահասակ որդիքը։ Երբ Վեդենեւիկ դուրս գալով առանձնանկից գանչիւ, վերցրեց մի լրագիր եւ կանգնեց դանչիճի պատահաններից մէկի առաջ, նրա բնակարանի հանդիպակալ նոր շինութիւնից արձակեց մի գնդակ, որ ծակելով պատահանի ապակին՝ դի-պաւ Վեդենեւիկի ձախ թաղուկի ուսի ոսկրին եւ փչելով նրան մօտ. ձախ թոքը Վիրաւոր-վածք իսկոյն վայր ընկաւ։ Նրա փոքրահասակ որդին հետախօսով իսկոյն իմաց տուեց եղելու-թեան մասին մօրը, Անգրիվկասեան երկաթու-ղու կառավարի փոխանորդ ինժեներ Շալկեւի-չին եւ երկաթուղական ըմբիշներին։ Ապանու-թեան տեղը կան չուտով եւ ռադիկալութեան ու դատաւտանական իշխանութիւնների ներկա-ացուցիչները։ Թիֆլիսից, որոնք խորհրդակցու-թեան հրաւիրեցին նաեւ քաղաքում գտնվող ամենապաւ վերաբոյժներին, չը վստահացան ան-դամատել վերքը, գնդակը հանելու նպատակով, որովհետեւ հանգուցեալը վաղուց արդէն տանջ-վում էր սրտի ցաւից։ Վերքը անապան մա-հացու էր Ե. Վեդենեւիկ հետեւեալ օրը, յուն-վարի 5-ի երեկոյան, մեռաւ։ Բաթումի տան-ջանքների մէջ։ Երկուշաբթի, յունվարի 7-ին, տեղի ունեցաւ հանգուցեալի յուղարկաւորու-թիւնը դէպի Ալեքսանդր-Նելսոնի տաճարը, իսկ այնտեղից երկաթուղական կաւարանը, որտե-ղից ուղարկվեց Պետերբուրգ հողին յանձնելու համար։ Յուղարկաւորութեան կարգը կատարեց Վրաստանի նոր էկզարխ Ալեքսի արքեպիսկո-պոսը, տեղական բարձր իշխանութեան ներկա-ացուցիչների, հանգուցեալի բազմաթիւ ծառա-յակիցների եւ ժողովրդի խումն բազմութեան ներկայութեամբ։ Հանգուցեալի դազակի վրա գրված էին բազմաթիւ պատկեր։ Անգրիվկա-սեան երկաթուղու վարչութեան զանազան բա-ժան-մունքներում եւ կայարաններում ծառայող-ների կողմից։

Թիֆլիսում բնակվող Միքայել Կաֆեան «Մշակի» 1902 թ. մի օրինակը նուիրեց Շուշու Աղաբեկցու եկեղեցու միաբանութեան։

Նաւթարդիւնարներին հերթական XVI ժողովում, որ կայացաւ վերջերս Բագում, ընկնեց յունվարի 3-ի նիստում Լ. Ղուկասի գեկուցարիւն այն միջնորդութեան մասին, որ յարուցել են Բիբի-Շէլքաթի արքունի նաւթա-հողերը վարձող 17 վարձակալներ՝ պուգալձարը մասովձարով հատուցանելու մասին։ Ձեկուցա-գրից երեւալ, որ այդ վարձակալները, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ ներկայումս նաւթի գինը շատ բնկել է եւ վարձած հողերը չահագոր-ծելը մեծ վնասներ է առաջացնում, որովհետեւ վարձագինը շատ թանկ է, խնդրամատուց են եղել կառավարութեան, որ փոխանակ վարձա-գինը փողով վարելու ամեն մի պուլի համար ստացվող նաւթի մի որոշ մասով վճարեն գան-ձարանին, այն է ստացվող նաւթի 25% տան գանձարանին։ Այդ գեկուցումն առաջ բերեց մի-ձարանութիւններ. եղան առաջարկներ, որ ժո-ղովը ընդունէ այդ միջնորդութիւնը. ուրիշները ապացուցանում էին, որ եթէ այդ միջնորդու-թիւնը մերժվի կառավարութեան կողմից, բոլոր նաւթահողերը կընկնեն մի քանի խոշոր ֆիրմանե-րի ձեռքն եւ այն ժամանակ այնպիսի մեծամեծա-նութիւն կը ստեղծվի, որ այլ եւս ոչ մի իշխա-նութիւն չէ կարող օգնել գործին։ Երբ կառա-վարութիւնը չը համաձայնի առաջարկար փո-խարինել մասովձարով, մանր վարձակալները ստիպված կը լինեն թողնել իրանց վարձած հողերը։ Ժողովը 56 ձայներով ընդգէմ 39-ի որոշեց յարգել 17 վարձակալների միջնորդու-թիւնը։ Խնդրի վերջնական լուծումն կախված է, ի հարկէ, կառավարութիւնից։

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ գրում են. «Յունվարի 2-ից սկսեց իր գործունէութիւնը Երեւանի նոր կազմված փոխադարձ վարկի ընկերութիւնը։

Բաթումից հաղորդում են տեղական լրագիր-ներին, որ այնտեղի քաղաքային խորհուրդը, ձայների մեծամասնութեամբ, քաղաքագլուխ է ընտրել իշխան Ի. Չ. Անդրոնիկովին, որ վեր-ջին ժամանակներս կատարում էր Կովկասեան յօբելեանական ցուցահանդէսի կօմիտարի պա-սօնը։
